Հավելված N 1
ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 10/2024 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
գնանշման հարցման մասնակցելու

«Հիդրոէկ» ՍՊ Ընկերությունը, «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲ Ընկերությունը համատեղ հայտնում են, որ կազմելով Կոնսորցիում, ցանկություն ունեն մասնակցել Գորիսի համայնքապետարանի կարիքների համար՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների գնանշման հարցման մրցույթին (այսուհետ՝ Մրցույթ)՝ Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի սնուցող ջրագծի վերակառուցման, նոր ջրհավաքների կառուցման և օրվա կարգավորիչ ջրամբարի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներն իրականացնելու նպատակով (Ծածկագիր՝ ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 10/2024) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«Հիդրոէկ» ՍՊ Ընկերությունը, «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲ Ընկերությունը հայտնում և հավաստում են, որ հանդիսանում են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

«Հիդրոէկ» ՍՊ Ընկերության
- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00528216
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ tokmajyan.hovhannes@gmail.com
- գործունեության հասցեն է՝ ք.Երևան, Արմենակյան 125/3
- հեռախոսահամարն է՝ 093-00-10-30

«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲ Ընկերության
- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 01516577
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ jhhi@jhhi.am
- գործունեության հասցեն է՝ ք.Երևան, Արմենակյան 125
- հեռախոսահամարն է՝ 099-42-62-36

«Հիդրոէկ» ՍՊ Ընկերությունը, «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲ Ընկերությունը հայտնում և հավաստում են, որ

1) իրենց փոխկապակցված անձինք բավարարում են ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 10/2024 ծածկագրով գնանշման մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և -ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում .

2) ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 10/2024 ծածկագրով գնանշման մրցույթի մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «Հիդրոէկ» ՍՊ Ընկերությանը, «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲ Ընկերությանը փոխկապակցված անձանց և (կամ) նրանց կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս կողմերին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

Digitally signed by BABAYAN ARMEN 2811590226
Date: 2024.08.10 12:40:35 AMT

Ստորև ներկայացնում է՝

«Հիդրոէկ» ՍՊ Ընկերության իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝
https://www.e-register.am/am/companies/1545254/declaration/e6b195c0-2fd4-40a4-806c-65cfa65edd9f

«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲ Ընկերության իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝
https://www.e-register.am/am/companies/1442686/declaration/a314202f-1821-4c4a-bd94-f24c64ff18aa

«Հիդրոէկ» ՍՊ Ընկերության տնօրեն

Հովհաննես Թոքմաջյան

Կ.Տ.

«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲ Ընկերության տնօրեն

Արմեն Բաբայան

Կ.Տ.

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
/ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ/

ք. Երևան **12 օգոստոսի 2024թ.**

«Հիդրոէկ» ՍՊ Ընկերությունը /այսուհետ՝ Գործընկեր-1/, ի դեմս տնօրեն՝ Հովհաննես Թոքմաջյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա և «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲ Ընկերությունը /այսուհետ՝ Գործընկեր-2/, ի դեմս տնօրեն՝ Արմեն Բաբայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, /միասին այսուհետ՝ Կողմեր, յուրաքանչյուրը առանձին՝ Կողմ/, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով Կողմերը պարտավորվում են միացնել իրենց կարողությունները և առանց իրավաբանական անձ կազմավորելու, համատեղ մասնակցել Գորիսի համայնքապետարանի կարիքների համար՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների գնանշման հարցման մրցույթին (այսուհետ՝ Մրցույթ) (ծածկագիր՝ ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 10/2024) և հաղթող ճանաչվելու դեպքում համատեղ իրականացնել Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի սնուցող ջրագծի վերակառուցման, նոր ջրհավաքների կառուցման և օրվա կարգավորիչ ջրամբարի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքները, համաձայն «Տեխնիկական բնութագրի» պահանջների:

Մրցույթի հրավերով սահմանված աշխատանքների իրականացման համար կողմերը համատեղ ունեն բավարար աշխատանքային ռեսուրսներ և փորձառություն:

2.Գործերի վարումը

2.1. Սույն պայմանագրի ներքո և դրա շրջանակներում կնքված պայմանագրերի գծով Գործընկեր 1-ը՝

- հանդես է գալիս Կողմերի անունից, պատասխանատու է նրանց համար, միաժամանակ իրավասու է ընդունել որոշումներ, համաձայնեցնելով Կողմերի հետ.
- վարում է ընդհանուր գործերը և պայմանագրերի կատարման հետ կապված գործողությունները, Կողմերի անունից իրավասու է ստորագրել և կնքել գործարքներ/պայմանագրեր/փաստաթղթեր.
- իրավասու է ինքնուրույն կառավարել և տնօրինել ֆինանսական միջոցները, ստանալ պայմանագրերից վճարման ենթակա գումարները, վարել համատեղ գործունեության հաշվապահական հաշվառումը:

2.2 Մրցույթը հաղթելու դեպքում Կողմերի անունից պայմանագրերի կնքման և պայմանագրերի սպասարկման հետ կապված գործերի վարումը կիրականացվի Գործընկեր 1-ի կողմից:

3.Վճարումները

3.1. Գործընկեր 1-ի կողմից նախատեսվում է իրականացնել նախագծային աշխատանքներ պայմանագրի արժեքի 90%- չափով, Գործընկեր 2-ի կողմից՝ 10%-չափով:

3.2. Կողմերի և պատվիրատուի միջև կնքված պայմանագրից ստացման ենթակա բոլոր գումարները ենթակա են վճարման Գործընկեր -1-ին, որի կողմից կատարվում է Կողմերի վճարումները համաձայն վերջինիս կողմից ներկայացված կատարողական ակտերի:

3.3 Սույն պայմանագրից բխող հարկային պարտավորությունները ենթակա են կատարման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

Digitally signed by BABAYAN ARMEN 2811590226
Date: 2024.08.10 12:12:32 AMT

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում իր կողմից ստանձնած բոլոր պարտավորությունների համար /այդպիսիք սահմանված լինելու դեպքում/՝ անկախ դրանց ծագման հիմքերից:

4.2. Կողմերը պայմանավորվում են պայմանագրի շրջանակներում միասին պատշաճ կատարել դրանցով ստանձնած պարտավորությունները: Կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում իր մասնակցության չափով:

5. Պայմանագրի գործունեության ժամկետը և լուծելու կարգը

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Ծրագրի կատարման հետ կապված պարտավորությունների պատշաճ իրականացումը:

5.2. Սույն պայմանագրից հրաժարվելու մասին Կողմի դիմումը պետք է տրվի ոչ ուշ, քան պայմանագրից նրա ենթադրվող դուրս գալուց երկու ամիս առաջ:

6 Այլ պայմաններ

6.1. Սույն պայմանագիրը կնքված է 2 /երկու/ օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գործընկեր-1	Գործընկեր-2
«Հիդրոէկ» ՍՊԸ	«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ
ք.Երևան, Ա. Արմենակյան 125/3	ք.Երևան, Ա. Արմենակյան 125
ՀՎՀՀ 00528216	ՀՎՀՀ 01516577
«Արարատբանկ» ՓԲԸ	«Արարատբանկ» ՓԲԸ
Հ/հ 1510043038640300	Հ/հ 1510005005540100
Տնօրեն՝ Հովհաննես Թոքմաջյան	Տնօրեն՝ Արմեն Բաբայան
(ստորագրություն)	(ստորագրություն)